


Հ. Ա. Խ. Հ. ՀԱԴՃՈՂԿՈՄԱՏ — ԱԳՐՈՏԵԽ ՊՐՈՊ

Զ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Զ Բ Ո Ւ Ց Ց

ՀԱՅԱԲՈՒՅՑՄԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ



## ԶՐՈՒՅՑ ՀԱՅԱԲՈՒՅԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հացաբույսերը մեր կարևոր կուլտուրաներն են։ Նրանք մարդկության սննդի հիմնական աղբյուրն են հանդիսանում։ Թե ամբողջ աշխարհում և թե մանավաճար ԽՍՀՄ-ում հացաբույսերը բոլոր ցանքերի մեջ առաջին տեղն են բռնում։

ԽՍՀՄ-ում 1933 թվին կատարած 129,7 միլիոն հեկտար ընդհանուր ցանքից միայն հացաբույսերը յեղել են 101,5 միլիոն հեկտար, այսինքն ամբողջ ցանքերի յերեք քառորդից ել ավելին։

Մեզ մոտ՝ Խ. Հայաստանում ևս հացաբույսերն ամենաատարածված կուլտուրաներն են, նրանք մշակվում են համաշյամեր բոլոր շրջաններում։

Հացաբույսերի ցանքի տարածությունը մեզ մոտ տարեց տարի ավելանում է։ Յեթե վերցնենք հացաբույսերի ցանքի տարածության աճումը ԽՍՀՄ-ում, ապա կտեսնենք, վոր 1913 թվից մինչև 1933 թիվն այդ տարածությունն աճել ե 7,1 միլիոն հեկտարով։ Այժմ, յերկրորդ հնգամյակում մեր կուտանսությունների ու խորհուտանակությունների հիմնական խնդիրը պետք ե լինի՝ վորքան կարելի յե բարձրացնել բերքատվությունը և վերջնականապես լուծել հացահատիկի խնդիրը մեզ մոտ։ Ինչպես ընկ. Ստալինը Համկ(ր)կ 17-րդ համագումարում տված իր գեկուցման մեջ ասում ե՝ մենք ստեղծել ենք բոլոր նախապայմանները, վարոնք հնարավորություն կտան մեզ արագ կերպով բարձրացնելու մեր գյուղատնտեսությունը։



1-33/3gr

Պատ. Խմբագիր՝ Արտ. Մարտիրոսյան  
Մասնագիտ. Խմբագիր՝ Մ. Թաւանյան  
Սրբադրիչներ՝ Խ. Այվազյան և Մ. Փանոսյան  
Հանձնվել ե տրատերության 1934 թ. մարտի 14-ին.  
Ստորագրվել ե տպագրելու 1934 թ. մարտի 21-ին.  
Գրավիտ № 222 Տիրաժ 2500 Պատվեր № 215

Մեր կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունները պետք ե լրիվ կերպով ոգտվեն բոլոր իրենց հնաւրավորություններից, նրանք պետք ե ճիշտ կերպով կիրառեն բոլոր անհրաժեշտ ազրոձեռնարկումները, վորապես կարողանան լուծել այդ կարևոր խնդիրը:

Տեսնենք թե ինչպիս պետք ե մշակել, ինչ աշխատանքներ պետք ե կատարել ու ինչպիսի կանոններ պիտի կիրառել, հացարույսերի մշակման դեպքում, վորպեսզի նրանց դնենք զարգացման լավ պայմանների մեջ ու ապահովենք բարձր բերքի ստացում:

Հացարույսերի խմբին են պատկանում մի շարք կուլտուրաներ (ցորեն, գարի, աշորա, յեղիստացորեն և այլն), սակայն մենք այստեղ այդ բոլորի մասին ել չենք խոսի: Մենք գլխավորապես կծանոթանանք գարնանացան հացարույսերի (գարն, ցորեն, գարի) վրա կատարվող աշխատանքների հետ, այն ել գլխավորապես այն աշխատանքների, վորոնք կատարվում են գարնան շրջանում, և մեկն ել նրանց, վորոնք նախապատրաստում են գարնանացանը:

## ԻՆՉՈՒՍԻ<sup>Հ</sup> ՇՐՆԱՅԻՆ ՈՒ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՆ ՊԱՅԱՆՁՈՒՄ ՀԱՅԱԲՈՒՅՍԵՐԸ

Մյուս պյուղատնտեսական կուլտուրաների հետ համեմատած, հացարույսերն ավելի քիչ պահանջվուածույսեր են, նրանք բավականին լավ զարգանում են համարյա բոլոր տեսակի հողերում: Նրանց համար վատ են սաքուր ավագային հողերը, լավ չեն զարգանաւա՞-

նաև խիստ աղուտ ու կիսաճանճային հողերում: Գարին ընդհանրապես ավելի պահանջվուած ե գեպի հողային պայմանները, քան մյուս հացարույսերը:

Դեպի կլիմայական պայմանները նույնպես նրանք այնքան ել պահանջվուած են: Հացարույսերը բավականին լավ զարգանում են շատ տարբեր կլիմա ունեցող վայրերում: Գարին կարող ե ավելի բարձր տեղերում մշակվել, քան ցորենը:

Աշորան ավելի քիչ պահանջվուած բույս ե, ու ավելի ցրտագիմացկուն, քան մյուս հացարույսերը:

## ՀԱՅԱԲՈՒՅՍԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂՆ ԻՆՉՈՎ ՊԻՏԻ ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼ

Ագրոտեխնիկական ամենակարևոր ձեռնարկումներից մեկը պարարտացումն եւ Պարարտացումը մեծ չափով բարձրացնում ե բույսերի բերքը: Նույնպես ե ազդում պարարտացումը նաև հացարույսերի վրա:

Հացարույսերն ամենից շատ աղոտային պարարտանյութերի կարիք են զգում, նրանց վրա շատ լավ ազդեցություն են թողնում նաև ֆոսֆորի, խիլ մասամբ ել կալցումի պարարտանյութերը:

1929—30 թվերին Հայաստանի զանազան շրջաններում պարարտացման վերաբերյալ կատարած գործերը հետեւյալ արդյունքներն են տվել:

Գարնանացան ցորենի բերքը միայն ազոտով պարարտացնելուց, բարձրացել է 30%, միայն ֆոսֆորով պարարտացումը բարձրացրել է 30%՝ իսկ ազոտով, և ֆոսֆորով միաժամանակ պարարտացնելու դեպքում, բերքն ավելացել է 91%՝ ինչպիս տեսնում ենք, պարարտացումը մոտ յերկու անգամ բարձրացրել ե ցո-

բենի բերքը. սա նշանակում է, վոր ամեն կերպ պետք ե  
աշխատել, վորքան հնարավոր է, մեծ չափով կիրառել  
պարարտացումը մեր դաշտերում:

Հացաբույսերի վրա գոմաղրի պարարտացումը  
շատ բարձր ազդեցություն է թողնում, վորովհետև նա  
լրիվ պարարտանյութ ե և իր մեջ պարունակում ե և՝  
աղոտ, և ֆուֆոր և կալիում: Սակայն բոլորովին թարժ  
գոմաղր տալն այնքան ել լավ չե, վորովհետև նրանից  
հացարույսերը կարող են պառկել, սնկային հիմանդու-  
թյուններով ավելի հեշտությամբ են հիմնդանում,  
մոլախոտերի քանակն ավելանում ե և այլն:

Վորմեսդի գարնանացանի յնուուն շրջանում աշ-  
խատանքի ավելի ծանրաբեռնվածություն չստեղծվի,  
ցանկալի յե գոմաղրը դաշտ տանել ձմեռը, կամ վազ  
գարնանը, վարն սկսելուց վորոշ ժամանակ առաջ:

Գոմաղրը, բացի հողը սննդանյութերով հարստաց-  
նելուց, նուե այն նշանակությությունն ունի, վոր հողը  
փիրուն ե դարձնում, իսկ այդպիսի լավ, փուխոր կազ-  
մություն ունեցող հողի մեջ բույսերն ավելի լավ են  
զարգանում և նրանց բերքն ել բարձր ե լինում:

Ինչպես բերված փորձերից տեսանք, հացաբույսերի  
վրա հանքային պարարտանյութերը ես շատ լավ ազ-  
դեցություն են թողնում: Հանքային պարարտանյու-  
թեր են՝ ցիանամիղը, սուպերֆուֆատը, ամմոնիում սուլ-  
ֆատը, սելիտան և այլն:

Հանքային պարարտանյութերով հողը պիտք ե  
պարարտացնել զարնանը: Յեթե հողն աշնանից վարված  
ե յեղել և դարնանը կրկնավար ե արվում, ապա լավ ե  
պարարտանյութերը տալ կրկնավարից առաջ, իսկ յեթե  
վարը կատարվում ե զարնանը, ապա լավ ե տալ վա-

րից հետո, վոցխելուց առաջ: Մելիտրայով պետք ե  
պարարտացնել հենց ցանքի ժամանակ, իսկ մասամբ  
ել ցանելուց 20 որ հետո:

Հողը պարարտացնելու տեսակետից շատ խոշոր  
նշանակություն ունեն նաև լնդեղեն բույսերը (առ-  
վույտ, վիկ, սիսեռ, լոբի, մաշ և այլն): Այս բույսերն  
երենց արմատների վրայի ուռուցքների մեջ յեղած  
բակտերիաների միջոցով, հողը մեծ չափով հարստացնում  
են աղոտով: Այնպիս վոր, յեթե հացաբույսից առաջ այդ  
հողամասում վորեն լնդեղեն բույս և ցանված, ապա  
նրանից հետո հացարույսը շատ բարձր բերք ե տալիս:

### ՅՈՂԸ ՅԵՐԲ ՊԵՏՔ Ե ՎԱՐԵԼ

Թե աշնանացան և թե գարնանացան կուլտուրա-  
ների համար ամենից լավ ե հողը վարել նախօրդ  
բույսի բերքահագաքարից անմիջապես հետո: Այս դեպ-  
քում հողը յերկար ժամանակ վարված ե մնում, նրա  
մեջ շատ ջուր և կուտակվում, բույսերի մնացորդները  
(արմատներ, ցողունի մասեր) լավ են քայլացվում և  
դրանով հողի բերքատվությունը բարձրանում ե:

Յեթե այդ ժամանակ աշխատող ձեռքերի և քա-  
շող ուժի պակաս և գգացվում, ու հնարավոր չի հիմա-  
կան վար կատարել, ապա կարելի յե թեթև յերեսավար  
անել, իսկ աշնանն արդեն կատարել հիմնական խոր  
վարը: Այս առաջին յերեսավարից հետո, հողամասում  
բավականին մոլախոտեր են առաջանում: Այդ մոլախո-  
տերը վոչնչացնելու տեսակետից եռ աշնան վարը բա-  
վականին խոշոր նշանակություն և ունենում:

Յեթե այդ յերեսավարը կատարելու հնարավո-  
րությունն ել չկա, ապա կարելի յե վարն անել նաև

ուշ աշնան։ Սակայն միշտ պետք եւ աշխատել այդ վարն  
անել վորքան հնարավոր եւ շուտ։

Գարնանացանների համար կարելի յեւ հողը վարել  
նաև գարնանը, սակայն, այս գեղքում պետք եւ աշխա-  
տել վարել վորքան հնարավոր եւ շուտ։

Հենց վոր ձմեռվա յեկած ձյունը հալվեց ու հողը  
«քեշի» յեկավ, այսինքն, նրա յերեսը մի քիչ չորացավ,  
այնպես վոր հնարավոր եւ այնտեղ աշխատել, պետք եւ  
վարն սկսել։

Վորքան գարնանը հողը շուտ եւ վարված, այնքան  
եւ նրա բերքատվությունը բարձր եւ լինում։ Յեթե հողը  
վարվել եւ վաղ գարնանից, ապա այդ գեղքում մինչեւ<sup>1</sup>  
ցանքը կատարելը յեկած անձեռների մեծ մասը ծծվում  
եւ հողի մեջ և հետագայում մեր ցանած բույսերն այդ  
ջուրն ոգտագործում են, իսկ յեթե հողն ուշ ենք վա-  
րում, նա յերկար ժամանակ մնում եւ պնդացած, անձ-  
եռների ջրերի մեծ մասը նրա վրայից հոսում կամ  
գոլորչիանում են և մեր հետագա բույսերին քիչ ջուր  
եւ մնում։ Իսկ ջուրը մեր բույսերի համար շատ անհրա-  
ժեշտ եւ։

Ինչպես ասացինք, հողը պետք եւ վարել այն ժա-  
մանակ, յերբ նրա քեշն յեկել եւ, այլ կերպ ասած յերբ  
նա հասունացել եւ։ Այս հասունացումը կախված է հողի  
խոնավության քանակից։ Քեշը գալու ժամանակը պաւ-  
զացիները շատ լավ գիտեն և փորձված զյուղացիները  
վարը կատարում են ենց այս ժամանակ։

Յեթե հողը վարենք այն ժամանակ, յերբ նրա մեջ  
շատ ջուր կա, ապա ցիսավար կստացվի, վորը հետա-  
գայում չորանալով, շատ ամուր կոշտեր եւ տալիս, վո-  
րոնց փշելն եւ շատ գժվար եւ լինում։ Դժվարանում  
նաև շարքացանի աշխատանքը։

Շատ չոր հողը նույնպես չի կարելի վարել վո-  
րովհետև վարելը դժվար եւ, իսկ յեթե հնարավոր ել եւ,  
ապա շատ կոշտեր եւ տալիս։ Դժրախտաբար այս ձեռ  
մեզ մոտ շատ եւ տարածված, յերբ ամուն կեսերին  
բոլորովին չոր հողը վարում են։

## ԽԶԹԵՍ ՎԱՐԵԼ

Վարը պետք եւ կատարել շատ խնամքով։ Կոլտըն-  
տեսականներն այս խնդրի վրա պետք եւ շատ լուրջ  
ուշագրություն դարձնեն, վորովհետև վորքան վարը  
յավ եւ կատարվոծ, այնքան հեշտանում են մյուս աշ-  
խատանքները, բույսի զարգացման պայմանները լավա-  
նում են և բերքն ել բարձրանում եւ։

Յերեկնմ մեր տրակտորիստները վարում են շատ  
անխնամ և հողի մեջ վրոշ չվարած հողակույտեր են  
թողնում։ Այդ չվարված կտորները ծածկված են լինում  
հողով և չեն յերեսում, սակայն յեթե ուշագրությամբ  
նայենք, ապա հեշտությամբ կարելի յեւ այդ պակասու-  
թյունը նկատել։ Կամ յերեկնմ խոր վար կատարելու  
փոխարեն, բարակ շերտով հողի յերեսը սեացնում են։  
Այսպիսի վար կատարելը հանցագործություն եւ։ Այդ-  
պես վարելով, կոլտնտեսությանը շատ մեծ վնաս հաս-  
ցրած կլինենք։ Այդպես վարված հողերում հետագա  
աշխատանքն ել շատ դժվարանում եւ, բույսերը թույլ  
են զարգանում, նպաստավոր՝ պայմաններ են ստեղ-  
ծվում մոլախոտերի աճման համար։ Այսպիսով մենք  
դցում ենք բերքի թե՛ք քանակը և թե՛ք վորակը։

## ՎԱՐԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վարի խորությունը կախված է հողի տեսակից,  
հայած թե ինչպիսի հող եւ, թե ինչ այլթից եւ բաղ-

կացած նրա տակի շերտը, բոտ այնմ ել վարքի խորությունը տարբեր պիտի անհեր՝ Ընդհանրապես հացաբույսերի համար պետք ե վարել ավելի յերես, քան որինակ ճակնդեղի, կարտոֆիլի, բամբակի համար։ Սակայն շատ յերես վարել չի կարելի։ Պետք ե ինկատի ունենալ, վոր խոր վարը բավականին չափով բերքը բարձրացնում է, այնպես վոր, յեթե տեղի հողն այնպիսին է, վոր կարելի յե խոր վարել, ապա պետք ե անպայման այդ անել Բացի այդ, խոր վարը վոչչացնում է շատ մոլախոտեր, իսկ մոլախոտերը վոչչացնելը, մանավանդ գարնանացան հացաբույսերի համար, շատ մեծ նշանակություն ունի։ Մոլախոտուա դաշտում գարը պարնանացանը շատ նվազ է լինում և բերքը ել մի քանի անդամ ընկնում է, Մըջին հաշվով պետք ե վարել 16—18 սանախմետը խորությամբ։

### ԻՆՉՈՎ ՎԱՐԵԼ

Վարը պետք ե կատարել անպայման թևավոր դութաններով։ Յեթե վորոշ շըջաններում գեռ ևս գործ ե ածվում չութը, ապա պետք ե անմիջապես հրաժարվել նրանից և վոչ մի գեղքում չութով վար չանել։

Բուկերներից նույնպես պետք ե հրաժարվել (նրանց կարելի յե գործածել կրկնավարի համար)։

Ինչպես ասացինք, ամբողջ վարը պետք ե կատարել միայն թեավոր գործիքներով, ՄՏ կայանների արագորեն լայնացող ցանցն այդ տեսակետից շատ լայն հնարավորություններ ե տալիս մեր բոլոր կոլտնտեսություններին։ Պետք ե հրաժարվել անհատական տնտեսությունից ժառանգություն մնացած չութից և նման գործիքներից և ամբողջ վարն ու մյոււս բոլոր

աշխատանքները մեքենայացնել և կատարել բարձր վորակի մեքենաների միջոցով։

### ՀՈՂԻ ՀԵՏԱԳԱ ՄՇԱԿՈՒՄԸ

Յեթե հողամասը վարված է աշնանից, ապա վաղ գարնանը, հենց վոր հնարավոր յեղավ դաշտ դուրս գալ, պետք ե անմիջապես հողամասը փոցինել, վորպեսզի մակերեսը հարթվի և շատ ջուր չգուրշիանա։ Յերբեմն հողն այնքան վատն է լինում, վոր ձմեռվա ձյան ազդեցության տակ նստած, պնդացած է լինում։ Այդպիսի դեպքում պետք ե վոչ թե փոցինել, այլ նախ կրկնավար անել և ապա փոցինել։ Կրկնավարը պիտի կատարել նաև մոլախոտերով շատ վարակված հողերում։

Յեթե վարը կատարվում է գարնանը, ապա դարձյալ վարելուց անմիջապես հետո պետք ե փոցինել։ Հողը պետք ե փոցինել ատամնավոր «զիգ-զագ» փոցիներով։ Փոցինելուց հետո, արդեն պետք ե կատարել ցանքը։

### ԻՆՉՈՒՄԻ ՍԵՐՄ ՊԵՏՔ Ե ՑԱՆԵԼ

Վորպեսզի կարողանանք մեծ բերք ստանալ, մեծ ուշագրություն պետք ե դարձնենք նաև սերմի վրա։ Մերմացուն պետք ե լինի առողջ, նրա մեջ չմշկված ու կոտրտված հատիկներ չպիտի լինեն, չպիտի լինեն նաև հիվանդ հատիկներ, նա պետք ե զտված լինի քարերից, հողից, մոլախոտերի սերմերից և այլն։

Բացի այս բոլորից, սերմերը պետք ե թարմ լինեն ու բարձր ծլունակություն ունենան։

Այս բոլոր պահանջներին բավարարելու համար, պետք ե սերմերը զտել, ախտահանել, յենթարկել ստուգման և ապա միայն ցանել։

## ՍԵՐՄԵՐԻ ԶՏՈՒՄԸ

Ինչպես ասացինք, սերմերի մեջ յերբեմն մեծ քառակությամբ քարեր, մոլախոտերի սերմեր ու այլ մնացորդներ են լինում: Այդ աղբը մեծ չափով գցում է սերմերի վորակը: Դրանից ազատվելու համար, պետք է սերմերը դժեւ:

Չտումը կատարվում է հատուկ սերմազախների միջոցով: Սերմազախները լինում են տարբեր տեսակների: Մեզ մոտ ամենից շատ տարածված է «արիեր» սերմազախը:

Տրիերը բավականին լավ մեքենա յե, նա հացաբույսերի միջից գտում են մոլախոտերի սերմերը, քարերը, փոշին, դարմանի կտորները և ալճն:

Բացի այս, տրիյերը հացահատիկը բաժանում է մի քանի մասի, (ըստ հատիկների մեծության)՝ մանր, միջակ և խոշոր հատիկների:

Սերմացուի համար պետք է վերցնել միջակ, կամ խոշոր հատիկները:

Այս գտման աշխատանքները պետք է կատարել անպայման ձմռան ամիսներին, յերբ աշխատանք շատ չկա և կողմնտեսականները համեմատաբար աղատ են:

## ԻՆՉՈՒ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՍԵՐՄՆ ԱԽՏԱՀԱՆԵԼ

Հացաբույսերը և հատկապես ցորենը, հաճախ հիշվանանում են մրիկ հիվանդությամբ: Մրիկը սունկ է, վորի սպորները ցորենի ծլման շրջանում վարակում են նրան, զարգանում են ցորենի հետ միասին և լըցնում նրա հատիկներն իրենց սև սպորներով:

Մրիկը մեծ չափով գցում է ցորենի բերքը, բացի այդ, նա ազդում է նաև պյուրի ու հացի վորակի վրա:

Ինչպես ասացինք, ցորենի հատիկների մեջ յեղած մեջ փոշին մրիկի սպորներն են ու հենց դրանք են, վոր վարակում են ցորենը: Այդ սպորները լինում են և՛ հողի մեջ և՛ ցորենի հատիկների վրա:

Մեծ մասամբ ցորենը վարակվում է իր հատիկների վրա յեղած սպորներով, այդ պատճառով եւ, մրիկի դեմ պայքարելու համար, պետք է զրանց վոչնչացնել:

Այդ սպորները կարելի յե վոչնչացնել ախտահանման միջոցով:

Ախտահանումը կատարվում է զանազան թույներով, վորոնք բոլորն եւ սպանում են մրիկի սպորներն, սակայն ցորենին վոչ մի վնաս չեն պատճառում:

Ախտահանումը կարելի յե կատարել հեղուկ և փոշի թույներով: Յեթե այն կատարվում է հեղուկ թույներով, ապա կոչվում է բաց ախտահանում, իսկ յեթե կատարվում է փոշի թույներով, կոչվում է չոր ախտահանում:

Թաց ախտահանումը կատարում են ֆորմալինով, պղնձարշամպի լուծույթով և այլն: Իսկ չոր ախտահանումը կատարվում է փարփայան կանաչով, ԱԲ փոշիով, Դավիթովի փոշիով և այլն:

Ավելի լավ է ախտահանումը կատարել չոր փոշիների միջոցով, քան թե լուծույթների, վորովինեակնախանումը ավելի հեշտ է և մեր բոլոր կոլտնտեսականներն եւ կարող են այդ կատարել: յերկրորդ՝ փոշիով ախտահանած սերմերը կարելի յե յերկար ժամանակ առանց վչացման պահել, մինչդեռ թաց ախտահանում կատարած սերմացուն պետք է մի քանի որում ցանել, վորովինեակնախանումը գցում է:

Զոր ախտահանումը կատարվում է հետեւալ կերպ։ Հասուկ ախտահանման մեքենայի մեջ լցվում է փորոշքանակությամբ ցորեն, իսկ նրա վրա լցնում են ախտահանիչ փոշին։ Նայած թե ինչ նյութով՝ ենք ախտահանում, ըստ այնու ել նրա քանակությունը տարբեր պիտի վերցնել, որինակ՝ փարիզյան կանաչով ախտահանելիս յուրաքանչյուր մեկ կիլո ցորենին պետք է վերցնել  $1\frac{1}{2}$  դրամ փոշի (*յուրաքանչյուր փթին ուժ գրամ*)։

ԱՅ ՓՈՉՈՂԻԿԱՔՈՒՄ, յուրաքանչյուր կելոյին պետք է վերցնել  $1-1\frac{1}{2}$  դրամ։ Փոշին լցնելուց հետո, մեքենայի անցքը փակում են և սկսում են պտտեցնել 3—5 րոպե, մինչև վոր փոշին լավ խառնվի ցորենի հատիկներին և ամբողջովին պատի նրանց մակերեսը։ Դրանից հետո բացում են մեքենայի դուռակը և արդեն ախտահանված ցորենը դատարկում պարկերի մեջ։ Այս աշխատանքը պետք է մեծ զգուշությամբ կատարել, վորպեսզի շատ փոշի չբարձրանա, վորովհետեւ այդ փոշին խիստ թունավոր է և կարող է աշխատողներին մասսել։ Աշխատողները պետք է իրենց բերանները թաց շորով փակեն։

Ախտահանման մեքենաները բավականին տարբեր են և տարբեր մեծության են լինում։ Մեքենաներներու գեղքում, ախտահանումը՝ կարելի յե կատարել պարկերի մեջ։ Այս գեղքում պետք է շատ խիտ կոտրից պարկեր վերցնել կամ ավելի լավ և յերկու պարկերը մեջ դնել, վորպեսզի նրանց արտնքներից թունավոր փոշին գուրս չգտ և աշխատողների վրա չաղքի։

Այս ախտահանումը կարելի յե կատարել ցանքից շատ առաջ և սերմացուն պահել այդպիսա՞մինչև ցանքի

ժամանակը, միայն պետք է այն պահել չոր տեղում։ Ախտահանված ցորենը բավականին չափով ապահովված է մըկելոց։

### ՍԵՐՄԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՍՏՈՒԳՎՈՒՄ

Սերմերի սուուկումը կատարվում է Պիտուներմ։ Տեսչության կամ նրա բաժինների կողմից։

Ցերբեմն պատահում ե, վոր սերմացուն իր մեջ մեծ քանակությամբ աղբ և պարունակում, կամ վորոշ դեպքերում, նրա ծլունակությունը շատ փոքր և լինում, այսինքն ցանքող սերմերի վորոշ մասը ծլելու ընդունակությունը չի ունենում և այլն։ Որինակ՝ յենթադրենք մեր սերմացուի ծլունակությունը հավասար է  $80^{\circ}/_0$ -ի։ Դա նշանակում է, վոր յուրաքանչյուր 100 հատիկից կարող է ծլել միայն ությունը։ Ցեթեւ, առանց այդ գիտենալու, այդպիսի սերմացուն ցանենք, ապա մեր ցանքը նոսր կլինի, մոլախոտերն ուժեղ կվարքանան, կճնշեն հաշարույսերին և ցերքն ել պակաս կլինի։

Այս նույնը կլինի նաև ազբուտ սերմ ցանելու գեղքում։ Ցեթեւ սերմի մեջ շատ աղբ կա, ապա նրա մաքրության տոկոսը ցածր է։ Մաքրության ցածր տոկոս ունեցող սերմեր ցանելու գեղքում, նույնպիս կատացվի։ Վորպեսզի այդպիս չլինի, պետք է իմանալ, թե ավյալ սերմի ծլունակության և մաքրության տոկոսը վորքան ե և այդ սերմը ցանելիս, համապատասխան չափով ավել վերցներ։ Որինակ՝ յենթադրենք մեր սերմացուի ծլունակությունը հավասար է  $90^{\circ}/_0$ , ապա այդպիսի սերմ ցանելիս, պետք է 10 տոկոսով ավել վերցնել վորովհետեւ մեր սերմի 10 տոկոսը ծլելու ընդունակությունը չունի։ Ցեթեւ ծլունակու-

թյունից բացի, մաքրության տոկոսն ել 100-ից ցածր է, տպա սերմը պետք է ել ավելի վերցնել:

Դոյուրթյուն ունի ծլունակության ու մաքրության տոկոսի վորոշ նորմա, վորից ցած լինելու դեպքում, ցանել չի կարելի:

Յերբեմն սերմացուն վարակված ե լինում շատ վտանգավոր մոլախոտերի սերմերով, այդպիսի սերմ ցանելով մենք ցանում ենք նաև այդ մոլախոտերի սերմերը, վորոնք ծլելով ավելի յեն տարածվում և ել ավելի վարակում դաշտերն ու հացարույսերը: Սերմացուի ստուգման ժամանակ, հաշվի յեն առնվում նաև այդ սերմերը և յեթե նրանք շատ են ու վտանգավոր, տպա այդպիսի սերմացուն չի կարելի ցանել, մինչև փոր նա նորից չզտվի:

Այս բոլորից յերեւում է, թե սերմերի ստուգումն ինչպիսի կարենոր նշանակություն ունի և վոր վոչ մի դեպքում չի կարելի առանց ստուգման կայանների թույլտվության վոչ մի հատիկ սերմացու հողի մեջ դցել:

### ԳԱՐՆԱԱՑԱՆՆԵՐԻ ՑԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Ցանքի ժամանակը հացարույսերի բերքի վրա շատ խոշոր ապեկցություն է թողնում: Փորձերը ցույց են տալիս, վոր վորքան քանքը վաղ և կատարված, այնքան ել բերքն ավելի բարձր և ստացվում:

Ռուսակի փորձադաշտում կատարված փորձերից ստացվել ե հետևյալ բերքը:

Վաղ ցանք . . . . . 9,5 ցենտներ

Միջին ցանք . . . . . 6,5 »

Ուշ ցանք . . . . . 5 »

Այս թվերը ցույց են տալիս, վոր վաղ ցանքն ուշ ցանքի հետ համեմատած, մոտ 2 անգամ բերքը բարձրացնում է:

Սակայն այս չի նշանակում, վոր ինչքան վաղ ուղենանք կացող ենք ցանել: Վորպեսպի ցանքն սկսենք, պետք և հողն այնպիսի գրության մեջ լինի, վոր հնարավոր լինի այնտեղ աշխատել: Բայց այս, պետք և որերն այնքան տաքացած լինեն, վոր այդ ջերմության տակ հացարույսերը կարողանան ծլել:

1-33/39r

Յերբ ցանքը շուտ ենք կատարում, բույսերն իւրենց արամագրության տակ շատ խոնավություն են ունենում, ջերմությունն ել դեռ այնքան ուժեղ չի լինում, այնպես վոր նրանք ուժեղ կերպով թփակալում են: Այս դեպքում ամեն մի հատիկից առաջանում են 7—8, յերբեմն ել ավելի ցողուններ ու այդքան ել հասկեր: Մինչդեռ ուշ ցանելու գեազքում, շատ թույլ են թփակալում և առաջացած հասկերի թիմն ել քիչ և լինում:

Բացի այդ, ուշ ցանած բույսերը շատ նվազ են լինում և հեշտությամբ հիվանդանում են զանազան հիվանդություններով, իսկ վաղ ցանելու դեպքում բույսերն ստացվում են ավելի առողջ և զանազան հիվանդություններին ու մոռնխոտերին ավելի լավ են դիմացքում: Վաղ ցանքը մասնավանդ խոշոր նշանակություն ունի չոր շրջաններ՝ համար:

Հացարույսերից ամենը վաղ պետք և ցանել դարին, իսկ ավելի ուշ գարնացացան ցորենը և մնացած հացարույսերը:

Ցանքի ժամանակը կատարված է նաև հողային և կլիմայական պայմաններից և գայլային հողերում ցան-

քը պետք եւ ավելի շուտ կատարել, քան կավային հողերում: Հարավային լանջերում ավելի շուտ, քան հուսախին:

## ԻՆՉՐԵՍ ՅԵՎ ԻՆՉՈՎ ՑԱՆԵԼ

Մեր կոլտնտեսություններում հացաբույսերը մեծ մասամբ ցանում են շարքացաններով: Սակայն դեռ կան կոլտնտեսություններ, վորոնք ցանքի բավականին մասը շաղացան են անում ձեռքով:

Յեթե շարքացանքը համեմատենք ձեռքով կատարած շաղացանքի հետ, ապա մենք կտեսնենք, վոր շաղացանքը զատ մեծ պակասություններ ունի: Վորհնք են այդ պակասությունները:

1. Շաղացանի դեպքում մենք նույնքան հողում ավելի շատ սերմ ենք ցանում, քան շարքացանի դեպքում: Միջին հաշվով շաղացանի ժամանակ մեկ հեկտարին՝ 30—50 կիլո ավելի սերմ և ծախսվում:

Յեթե հաշվենք, թե Հայաստանի բոլոր կոլտնտեսությունները միասին քանի հեկտար շաղացանք են կատարում և այդ պատճառով ինչքան ավել սերմ են դցում հողի մեջ, ապա կտեսնենք, վոր մենք ամեն տարի ի զուր տեղը հսկայական քանակությամբ սերմ ենք կորցնում:

Վորպեսզի ավելի պարզ լինի, բերենք մեկ որինակ—դիցուք թե մի կոլտնտեսություն 400 հեկտար հացաբույս պիտի ցանի և դրա միայն կեսն և շարքացանով ցանում, իսկ մյուս կեսը՝ շաղացան և անում: Կնշանակի նա 200 հեկտար շաղացան կատարեց: Յեթե հաշվենք, վոր ամեն մեկ հեկտարին միջին հաշվով 40 կիլո ավել և ցանել, ապա  $40 \times 200 = 8000$  կիլո: Այ-

սինքն՝ այդ տնտեսությունն ի զուր աեղը 8000 կիլո կամ այլ կերպ ասած, 80 ցենտներ սերմ և գցել հողի մեջ իսկ 80 ցենտներ հացահատիկը մի կոլտնտեսության համար, այնքան ել փոքր բան չեւ

2. Շաղացանը սերմերը հավասար խտության չի ցանում: Մի տեղ ավելի խիտ եւ լինում և այդտեղի բույսերը նվազ են աճում, իսկ մի ուրիշ անդ ել բաց տարածություններ են մնում, վորոնք չեն ոգտագործվում հացաբույսերի կողմից: Այդ բաց տեղերում բակմաթիվ մոլախոտեր են զարգանում:

3. Շաղացան ցանելիս, սերմերը տարբեր խորության մեջ են ընկնում, միաժամանակ չեն ծլում և հետագայում իրար խանգարում են:

Այս բոլորից մենք տեսնում ենք, վոր շաղացանի դեպքում բույսերը վատ են զարգանում և նրանց բերքըն ել ցածր եւ լինում, մինչդեռ շարքացանի դեպքում ավելի բարձր բերք եւ ստացվում:

## ՑԱՆՔՆ ԻՆՉ ԽՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ

Ցանքի խորությունը հացաբույսերի համար բավականին խորը նշանակություն ունի: Խորությունը նախ և առաջ կախված եւ սերմի մեծությունից: Վորքան սերմը խորը ե (որինակ յեգիպտացորենը), այնքան խոր պետք և ցանել և ընդհակառակը, վորքան մանր ե, (որինակ կորեկը), այնքան յերես:

Ցանքի խորությունը կախված ե նաև հողի խոնավությունից: Խոնավ հողերը պետք ե յերես ցանել, վորովհետեւ այդ դեպքում ծիլերն ավելի շուտ դուրս կգան և ավելի ուժեղ կլինեն: Իսկ չոր հողերում պետք ե ավելի խոր ցանել:

Հողի տեսակը նույնպես ազդում է ցանքի խորության վրա։ Ավագային փուխը հողերում պետք է ցանել ավելի խոր, քան կավային ծանր հողերում։

Այս բոլորը չեն նշանակում, վոր ինչքան ուզմնանք կարող ենք խորությունն ավելացնել կամ ընդհակառակը պահանջնել։

Միջին խորությունը հացարույսերի սերմերի համար՝ 3—4 սանտիմետրն է, և հողային ու կլիմայական տարրեր պայմաններում, ցանքը խորացնելու կամ առաջացնելու գեղքում, պետք է առաջնորդվել այս միջին խորությունով։

### ՑԱՆՔԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Ցանքի խտությունը ևս շատ կարևոր խնդիր է և կախված է մի շարք պայմաններից։

#### 1. Հողի հատկություններից։

Վորքան հողը պարաբա և ու լավ է, այնքան ել ցանքը պետք է նոսր կատարել, վորովհետև պարաբա հողում ցորենն ավելի ուժեղ է թփակալում, շատ ցորւնելու և տալիս և ցանքն ավելի խիտ և դառնում։

2. Սերմի վորակից, վորքան սերմացուն լավ է, այնքան ցանքը պետք է նոսր կատարել։

3. Ցանքի խտությունը կախված է նաև ցանքի ժամանակից. վաղ՝ ցանելու դեպքում պետք է ավելի նոսր ցանել, քան ուզ ցանելու դեպքում և այլն։

4. Չոր հողային և կլիմայական պայմաններու ցանքը պետք է ավելի նոսր անել, վորովհետև այդ պայմաններում հողը քիչ ջուր և պարունակում իր մեջ և բույսերը հաճախ առաջում են զրի պակասությունից։

Եսուր ցանելու դեպքում հողամասի վրա քիչ բույս և լինում և ուրեմն քիչ ել ջուր են գործիացնում։

Միջին հաշվով մեկ հեկտարին պետք է ցանել 120-135 կիլոգ. սերմ։ Գարին պետք է ավելի ցանել, քան ցորենը։

### ԻՆՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵԼ ՀԱՅԱԳՈՒՅԵՄԵՐԻ ԴԱՇՏՈՒՄ ՑԱՆՔԻՑ ՃԵՏԾՈ

1. Աշխանացան ցորենների հողամասը հաճախ մինչև գարուն յերեսից կեղև և կազմած լինում, ամրացած և լինում, վորի հետևանքով հողում յեղած ջուրը հեղտությամբ գործիանում է, իսկ ողը (վորը շատ անհրաժեշտ է բույսի արմատների համար) դժվարությամբ է ներս թափանցում հողի մեջ։ Այս կեղևը վոչընչացնելու համար, հաճախ գարնանն այդ աշխանացանները փոցիսում են։

Սակայն այս աշխատանքը պիտի կատարել վաղգարնանը, մանավանդ մեր չոր կլիմայական պայմաններում, վորտեղ այդ աշխատանքն ուշացնելն ավելի շուտ վասա կերպի, քան ողուստ։

2. Ցանքից վորոշ ժամանակ անցնելուց հետո, յեթե այդ դաշտում շատ մոլախոտեր են յերևացել, անպայման դաշտը պետք է քաղհանել և դրանց հեռացնել։

Քաղհան պետք է անել հատկապես այն հողերում, վորտեղ շատ տարածվել են բազմամյա, խիստ վտանգավոր մոլախոտերը, հատկապես կանգառների (փուշ) զանազան տեսակները։

Բացի այդ, քաղհանն անհրաժեշտ է գեր, քանի դեռ այդ փշերը փոքր են



Այս աշխատանքները կատարելուց հետո, այլևս  
մինչեւ բերքահավաքը հացաբույսերի գաշտում ուրիշ  
աշխատանք չի կատարվում։ Միայն ջրովի շրջաններ-  
ում պետք են հողամասը ջրել։

Մենք համառոտ կերպով ծանոթացանք բոլոր  
այն աշխատանքների հետ, վոր պետք և կատարել զար-  
նանը հացաբույսերի վերաբերյալ։ Այս բոլոր կանոններ-  
ը ճիշտ և ժամանակին կատարելու դեպքում միայն  
կարելի յեն հացաբույսերից բարձր բերք ստանալ։ Բեր-  
քատվության բարձրացումը մեր կոլտնտեսություննե-  
րի հիմնական խնդիրը պեսք և լինի և նրանք ամեն  
ջանք պիտի գործ դնեն, վորպեսզի մշտկությունը տա-  
նեն կանոնավոր կերպով, պայքարեն մոլախոտերի  
գեմ, ցանեն գտված և ախտահանված սերմ, կիրառեն  
կանովավոր ցանքաշրջանառություն և այլն։ Միայն  
այս բոլոր ձեռնարկումները կատարելով կարելի յե-  
քերքը բարձրացնել և դրանով նպաստել կոլտնտեսա-  
կանի ունկոր գառնալուն։



ԳԻՒԸ 25 Կ.

1934թ. - 219

1

33 Ե



ССРА Наркомзем—Агротехпром

Յ. АСТВԱЦԱՏՐՅԱՆ

Беседа по обработке хлебных злаков

Сельхозгиз

1934

Эривань